«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ռ Ե Կ Տ Ո Ր

06 հոկտեմբերի 2021թ. N 200 – Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի դրույթները, ղեկավարվելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) կանոնադրության 27-րդ կետի դրույթներով.

Հաստատել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողների խրախուսման կարգը՝ համաձայն հավելվածի:

Ռեկտոր՝ Դ. ԳԱԼՈՅԱՆ

06 հոկտեմբերի 2021թ.
ք. Երևան

Հավելված
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի
06 հոկտեմբերի 2021թ. N 200-Լ հրամանի

ԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

1. Սույնով սահմանվում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) աշխատողների, ներառյալ նաև ռեկտորի (այսուհետ՝ աշխատողներ) խրախուսման կարգն ու պայմանները:
2. Համալսարանում խրախուսումը կիրառվում է աշխատանքային պարտականությունները բարեխիղճ և ժամանակին կատարելու, աշխատանքային հաջողություններ ունենալու և այլ վաստակի համար համալսարանի աշխատողների աշխատանքի արդյունավետության բարձրացման, աշխատանքի արդյունքների, ունակությունների և որակավորման չափանիշներով առաջխաղացմանը նպաստելու նպատակով:
3. Համալսարանում դրամական պարգևատրումը, որպես խրախուսման ձև, տրվում է աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարումով:

4. Աշխատողներին խրախուսելու վերաբերյալ համալսարանի ռեկտորին առաջարկություններ են ներկայացնում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, պրոռեկտորները, դեպարտամենտների տնօրենները, ովքեր պատասխանատու են համապատասխան աշխատողների կարգապահության, կատարված աշխատանքների արդյունքների համար:
5. Կառուցվածքային ստորաբաժանումների կազմի մեջ չմտնող և անմիջապես ռեկտորի ենթակայության աշխատողների նկատմամբ խրախուսման վերաբերյալ որոշումը կայացնում է ռեկտորը:
6. Աշխատողի նկատմամբ կիրառվող խրախուսումը ձևակերպվում է ռեկտորի հրամանով և հաշվառվում է նրա անձնական գործում:
7. Դրամական պարգևատրման չեն կարող ներկայացվել այն աշխատողները, որոնց նկատմամբ վերջին վեց ամսվա ընթացքում կիրառվել է կարգապահական տույժ, համատեղությամբ աշխատողները և պարգևատրման վերաբերյալ ռեկտորի հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից անմիջապես առաջ վեց ամսից պակաս համալսարանում աշխատանքային ստաժ ունեցողները:

Ռեկտոր՝ Դ.ԳԱԼՈՅԱՆ